<<Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

01.12.2023թ

«Հայկազունք» ՍՊԸ տնօրեն Կ. Մացակյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

<<ՀՀ Արարատի մարզի Արմաշի Մ. Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի և «Հայկազունք» ՍՊԸ –ի միջև 04.09.2023թ կնքված N 54-ԱՄՕԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 դպրոցական սննդի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ դեկտեմբերի 25-ը:

Մինչև նոյեմբերի 20-ը «Հայկազունք» ՍՊԸ –ն ստանձնած պարտավորությունները կատարել է ժամանակին և բարեխիղճ:

Նոյեմբերի 20-ին պատվեր է տրվել, և մատակարարը չի մատակարարել ապրանքը: Համաձայն կնքված պայմանագրի 2.1.1 կետի, եթե մատակարարը սահմանված ժամկետում չի մատակարարում ապրանքը և խախտում է մատակարարման ժամկետը, պատվիրատուն միակողմանի խզում է պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ <<ՀՀ Արարատի մարզի Արմաշի Մ. Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ը միակողմանի լուծում է <<ՀՀ Արարատի մարզի Արմաշի Մ. Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի և «Հայկազունք» ՍՊԸ –ի միջև 04.09.2023թ կնքված N 54-ԱՄՕԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումըկայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հն արավորությունը չի վերացել:

Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «Հայկազունք» ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին:

ՏՆՕՐԵՆ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ